

Ուր կարապներ կ'արածէին ձիւնաթոյր  
 իր լուսւէտ գետին մէջ. չե՞ն պակսիր հռն  
 Հօտերուն ո՛չ ականակիտ աղրիւրներ,  
 Ոչ զալարիբ, եւ ըրւարն ինչցան լոզէ  
 Երկարատեւ օրերում, ցայզը կարճուկ  
 Կը հասցընէ նոյնքան շաղով զովարար :

Թրգմ. Հ. Ա. Ղազանչյան



## Ա Ա Ս Տ Օ Տ Թ Կ Ա Վ Ս Ա

### Ա.

Այժմիկի ափունքներն և Հնդկաստանն ուր կ'աճին  
 Խորհրդաւոր կանեփներ, թեզի չեղան անծանօթ,  
 Երբ դուն մազերը հովին՝ կ'երազէիր ցռուկին մօտ,  
 Գեղեցկագոյն աշխարհներ՝ պարտէզներէն լիրջոցին...

Եւ Մըտածումն յաղթական՝ ալիքներու մըմունջին  
 Եր վայրագ շունչը տալով՝ կը բարձրանար ափին մօտ,  
 Քու հոգիիդ անսահման երկնքին մէջ մըրըրկոտ,  
 Արծիւներու հանգունակ որ ճախրաթե կը փախչին...

Կ'երազեմ նաւող հիմա և մեկնումներն յուսավառ  
 Որոնցմով դուն ջահեցիր ովկէանին մէջ իսաւար,  
 Հորիզոնէ հորիզոն՝ մեծ Գաղափարն անվէեր:

Պղինձին համար այս երգին կ'երազեմ նաւող, որուն  
 Յուուկը բռսոր, ծիրանի փողփողումովն Արեուն՝  
 Ծովերուն սիրոց կապոյտ վիշապօրէն կ'արիւնէր....

### Բ.

Բայց ո՛չ ոսկին որ ծեփեց մարմարի տեղ Պերճանքի  
 Ապարանքներ դիւթական ուր Աղրիւրները լացին,  
 Ո՛չ գիպակները հիւսուած անըրջանցէն Մեսաբոյն  
 Ուր գրգանքի պարտէզով հեշտանցը լուռ կը ծաղկի,

Ո՛չ կարմըրերփըն շըպարն իրբե արիւն սուտակի,  
 Ո՛չ ալ ծարիրը որով կ'ըլլան աչքերն անսահման  
 Խորհրդաւոր գիշերներ, ո՛չ բռւսար, ո՛չ կարկեհանն  
 Առինքնեցին քու հոգիդ, ով Ախոյեան վըտանզի...

Դուն փնտուեցիր էութեանդ հորիզոնները միայն  
 Որոնց վըրայ բարձրացող Արեր ջանն էր Մտցին.  
 Կը մոնչէր ձայնող անձկոտ հրուանդանէ հրուանդան,

Երբ նաւիդ մէջ ունէիր աղկիոններ թանկագին,  
Ու խեփորներ սատափեայ, եւ ճակատիդ վրայ խոնարհ  
Վէրըջապէս աղն ովկէանին՝ որ մաքրաշող կը չորնար...

## Գ.

Խորունկ էր սիրողդ ինչպէս լուրթ ովկէանը մըոայլ,  
Երբ իրիկուն մը Սիրոյ, Ագրիկէի թոյրերով  
Որոնց անհուն պարտէզէն միշտ Արևելքն է զինով,  
Երբ իրիկուն մը սիրոյ ուզեց հոգիդ արքենալ...

Եւ այն ատեն, ով գաղտնիք, երազեցիր ունենալ  
Գու ցոկանաւըդ լցուն խորհրդաւոր զարդերով,  
Երբ Անձկութիւնը սրտիդ կը խոնարհէր ժպտելով  
Ալիքներու վէտվէտուն շափիւղային ոսկեփայլ...

Սիփանկոյի հանքերուն հարբատութիւնը ոսկի,  
Եւ գոհարները՝ տժգոյն երանքներով սուտակի,  
Երբ իրիկուն մը Սիրոյ կը տանջէին քու հոգիդ,

Որքան, որքան ուզեցիր, անհունօրէն տիսրամած,  
Ծովախորշի մը դաւար կառանել նաւիդ յոգնած  
Ու ծանրաբեռ տակաւին աղկիոններէն Յընորցիդ...

## Դ.

Բայց մեկնեցար վերըստին, ովկէանին կանչն էր հըզօր,  
Դեռ անծանօթ ափունքներ Աշուններով խնկաւէտ  
Կը սպասէին քու նաւիդ որ կապոյտ էր ծովին հետ,  
Ու կը բանար հովին դէմ իր լայն թերը բոսոր,

Ով լուս՝ ձանձրոյթն անպատում հոգիիդ մէջ ամէն օր  
Այս միւնոյն աշխարհէն, ինչ հորիզոն մ'արփաւէտ  
Կ'անդոհէր միտքըդ երրոր ծովին ճամրան էր անհետ,  
Ու կը փախչէր աւելի տեսլապատկերն հեռաւոր:

Կ'երազեմ նաւիդ իբրև ճշմարտութիւնն այս երգին  
Ուր Յընորցիդ աղկիոններն այնքան բոսոր կը ծաղկին,  
Արշալոյսի քրքումներ՝ ալիքներէն շափիւղայ:

— Ովկէանը զոր սիրեցիր տըզու մը պէս միամիտ,  
Վիշապներու ցաւագին հեծելտանքին մէջ կու լայ  
Սիրուհիի մը նըման, անվերադարձ քու Հոգիդ...

(Աստուածներուն Վերջալոյսը)

ԱՐՄԵՆ-ԵՐԿԱԹ